ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՈՎ 2003 ԹՎԱԿԱՆԸ ՀՌՉԱԿՎԵՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՏԱՐԻ

(Հոբելյանական տարվա առաջին Ուխտի Պատարագը Մայր Աթոռում)

Կիրակի, փետրվարի 2-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հընթացս Ս. Պատարագի, հանդիսավորապես ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը՝ նվիրված Մայր Տաճարի օծման 1700-ամյակին. Վեհափառ Հայրապետի կոնդակով 2003 հոբելյանական տարին հռչակվեց Աստվածակառույց Ս. Էջմիածնի տարի:

Հայրապետական կոնդակն ընթերցեց Նոր Նախիջևանի և Ռուսասպանի թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը: Կոնդակում (տե՛ս էջ 3), անդրադառնալով Ս. Էջմիածնի նվիրական խորհրդին, Նորին Սրբությունն իր ողջույնն է հղում Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին, թեմակալ առաջնորդներին, հոգևոր դասին ու հավատացյալ ժողովրդին և պատգամում՝ ազգահավաք ու հայրենաշեն գործերով նշանավորել մեծ հոբելյանը:

Նույն օրը Մայր Աթոռն ընդունեց հոբելյանական տարվա անդրանիկ ուխտավորներին: Առաջին ուխտագնացներն Արմավիրի թեմի հավատացյալներն էին՝ թեմակալ առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի, Արմավիրի մարզպետ Ալբերտ Հերոյանի և մարզի երեք քաղաքապետերի գլխավորությամբ: Տ. Սիոն եպս. Ադամյանը մատուցեց առաջին Ուխտի Պատարագը: Ս. Պատարագից հետո Արմավիրի ուխտավորներին ընդունեց Վեհափառ Հայրապետը:

Հոբելյանական տարվա առիթով Մայր Տաճարում Ուխտի Պատարագներ կմատուցվեն տարվա տարբեր կիրակիներին, երբ հայոց թեմերի առաջնորդները, քահանայից դասի և իրենց թեմերի ուխտավորների հետ, ուխտի կգան Մայրավանք:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ